ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4466-Ա «10» սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՊՈՂՈՏԱ Հ.2 ՇԵՆՔ Հ.5 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 08.09.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից 02.06.2026թ տրված տեխնիկական դրական եզրակացությունը, հաշվի առնելով Մյասնիկյան պողոտա հ.2 շենք հասցեի ընդհանուր բաժնային սեփականատերերի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված ցանկը, Մյասնիկյան պողոտա հ.2 շենք հասցեի ընդհանուր բաժնային սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները, ինքնակամ կառույցների արտաքին չափերի վերաբերյալ «ՍՎ ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2026թ. տրված եզրակացությունը, ինչպես նաև կառույցն իրականացրած անձի և նրա ներկայացուցչի դիմումները (18.06.2026թ. հ.Դ-62949-26, 23.07.2026թ. հ.Դ-77426-26, 31.07.2026թ. հ.Դ-80696-26, 24.08.2026թ. հ.Դ-89664-26).

1. Երևան, Կենտրոն, Մյասնիկյան պողոտա հ.2 շենք հ.5 հասցեում քաղաքացի Արաիկ Արամայիսի Հարությունյանի կողմից ինքնակամ իրականացված 14.05 քառ.մետր (բնակելի (անտրեսոլ)) ընդհանուր մակերեսով կառույցը (անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 27.05.2002թ. հ.763421 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.20267LTGPK) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձինք.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 143310 (մեկ հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ